 ուղարկւել: Պատճառն որ Յիսուսի  
 արիւնն աստուծոյ արիւն է: (Գործ.  
 Ի. 28:) և նորա համար ամէն մեղ-  
 քից սրբումէ. (մ. 304. մ. 7.) նորա  
 արդարութիւնն աստուծոյ արդարու-  
 թիւն է. (Հով. 22:) և նորա  
 համար բաւական է շատ ամբարիշտն  
 էլ արդարացնելոյ: Արեմն չի երկ-  
 մտես. և չի յուսահատվիս. ինչու  
 որ՝ քո փրկիչն՝ քո ողորմելի հոգոյ  
 սիրոզն հնպէս է ասում. նա որ ինձ  
 մօտ է գալիս, ես դուրս չեմ հանիլ

նորանս. և նորա առաջ ին իսկի ջո-  
 կութիւնս չըկայ. ինչու որ նա չի  
 ուզում. որ մինս կորչի, բայց սր ա-  
 մէնքն ապաշխարութիւն գանս (Ք.  
 Ա. Գ. 9.) Նայց կատես դու, մի  
 թէ պէտք չէ՞ ինձ, որ առաջ իմ  
 սրտըս շիտակացնեմ, և իմ կեան-  
 քըս դէպի լաւն փոխեմ, և ապա հա-  
 մարձակիլ իմ նորա մօտ գար. Նայա  
 եթէ դու մտիկ տաս և ուշանաս  
 մինչև որ էս փոփոխութիւնըս քո առ-  
 ձիդ կարողութենովն կատարես, իրա-  
 վի է որ վերջն քո մեղաց մէջն կը-  
 մեռնիս. ինչու որ դու ինքդ իսկի  
 չես կարող քո սիրտըդ շիտակ առել.  
 և քո կեանքըդ դէպի լաւն փոխել.  
 Ահաք է որ Քրիստոս ինքն քո ան-  
 ղակ առէ էս, նա ինքն ճշմարտու-  
 թենով կանէ քեզ համար, երբ որ  
 նորա խաչին մօտ կըգաս՝ քո մեղքե-  
 րն խոստովանելով, և միայն նորա  
 արիւնին վերայ քո ամէն յոյսըս դը-  
 ղելով որ նորան իբր քո մեղաց ճըշ-  
 մարիտ և կատարեալ քաւութիւն հա-  
 ապտով ընդունիս. Նայա պէտք է

քեղ որ նորա մօտ դաս հեց Էնպէս  
 ինչպէս որ ես. այսինքն ինչպէս ո-  
 դորմել ի և խեղճ մեղաւոր, որ նորա  
 արիւնոյն լուացլ իս, և նորա արդա-  
 րութեանն իբր նոր շորով զարդար-  
 վ իս, նորա հագոյն սրբվ իս և ապա  
 պատրաստ լինիս նորա փառացն մաս-  
 նակից լինելոյ: Այլ ի՞նչու ես երկ-  
 մուսմ ընդունել էն որ նա Էնպէս  
 յօժար է տալ քեղ, և էն էլ ձրի և  
 աւանց արծաթի, և աւանց մեծ գին  
 տալոյ: (Առաջ. ծէ. 1:) այսինքն մե-  
 զաց թող յաթիւնն, սրբութիւնն և  
 երկնքի արքայութիւնն: Պատճառն  
 որ նորա յատուկ գործն էն է որ  
 մեղաւորն ընդունի. (Այլ. ծէ. 2:)  
 որ փրկէ նորանց: Այլ սրա հա-  
 մար յայտնի ասաց. թէ նա որ ինձ  
 մօտ է գալիս՝ ո՞վ որ լինի, կամ  
 ինչպէս որ լինի, ես իսկի գուրս  
 չեմ հանիլ նորան:



## ՏՄԱՆԵՐՈՒՄԻ ՔՆՐԱՅ:

Մենք որ հաւատքովն արդա-  
 րացած ենք, աստուծոյ հետ խա-

Ղաղուժիւն ունեցանք մեր Տէր  
Յիսուսի Քրիստոսի ձեռովս  
(Հոօճ. Է. 1.)

Տէրն ասումէ ամբարիշտն ըն խա-  
ղաղուժիւն չը'կայ: (Նայց. խր. 21.)  
Պատճառն որ էն մեղաւորն որ դեռ  
մեղաց թողուժիւն չի ստացել չի  
կարող աստուծոյ հետ խաղաղուժիւն  
ունեցալ:

Քանի ժամանակ որ նորա խըղձ-  
մտանքն դեռ թմբացած է, կարելի է  
որ նա անհող և անվախ լինի: Նայց  
երբ որ նորա աչքերն կըբացվի, և  
նորա սիրտն կըսկսէ իմանալ իրան  
կորուստըն, էն ժամանակն շուտով  
կըձանսալէ՝ թէ ինքն ողորմելի է,  
մինչև որ հենց աստուած ինքն խա-  
ղաղուժիւն հասցնէ և շնորհէ նորա  
մեղքով դատապարտված հոգոյն: Եր-  
դարանալն էն է որ մեղաց թողու-  
ժիւն ենք ստանում և աստուծոյ  
առաջին ընդունելի ենք լինում:  
Նայց մեղաց թողուժիւնըն և աս-  
տուծոյ առաջին ընդունելի լինին  
իսկի մին բանով չենք կարող ստանալ

քայց մէնակ Յիսուս Քրիստոսին  
 հաւատալով որ նա իրան պատուա-  
 կան արիւնոյն մեր մեղքերն քա-  
 ւեց: Ապա երբ որ շորհք տրվել  
 ինձ որ հաւատամ. թէ Յիսուս Քր-  
 իստոս իմ մեղքերս վեր առաւ, եւ  
 իսկի մին քան չըկոյ որ կարենայ իմ  
 խղճմանքս խառնել յետ: Ինչու որ  
 էն ժամանակն խաղաղութիւն ունիմ  
 աստուծոյ հետ: Օարթնացած մար-  
 դոյ խառնութիւնն իրան մեղքով  
 դատապարտված խղճմանքիցն, և նո-  
 րա մեղաց ծանր բեռնիցն է դուրս  
 գալիս՝

Աւրեմն երբ որ ողորմելի և վա-  
 խով բռնված մեղաւորն անդեակ  
 լինի՝ թէ Քրիստոս հեց Կապիսի-  
 ներին համար մեռաւ, ինչպէս որ  
 ինքն է: և թէ քրիստոս աստուած է  
 որ կարող է մեղաւորներն գլխաւո-  
 րն եւ վերկել. և թէ նորա աշխարհք  
 գալոյ յատուկ պատճառն հեց էս  
 էլաւ. և թէ՛ նա ինքն ասաց. նա որ  
 ինձ մօտ է գալիս՝ էս դուրս չեմ  
 հանիլ նորան (Յօհ. 7. 37.) ասու-

մեմ՝ երբ որ ողորմելի մեղաւորն  
 էս ամէնս իմանայ և հաւատայ, ապա  
 հա խաղաղութիւն ունի աստուծոյ  
 հետ. և էն ժամանակն կարող է աս-  
 տուծայն իրան հայր կանչել, կարող  
 է ամէն բանի համար աստուծոյ վե-  
 րայ իրան յոյսըն դնել. կարող է շատ  
 ուրախութեամբ մահի համար էլ  
 մտածել, և աստուծոյ էն փառաց յու-  
 սոյն ուրախանալ: Ա՛լ մեղաւոր  
 մարդ ասն մի թէ դու էօպէսի ե-  
 րանելի վիճակումն էս հաստատուած  
 դիտումես սր քեզ փրկութիւն չբկայ  
 եթէ դու Քրիստոսի հետ մահակ-  
 ցութիւն չունենաս. և թէ իսկի մին  
 բանով աստուծոյ հետ խաղաղութիւն  
 չբկայ, բայց մէնակ Քրիստոսի ձե-  
 ուոյն. և թէ քո կեանքդ իսպառ ո-  
 ղորմելի պէտք է լինի և քո մահդ  
 յաւիտենական խղճութեան և տան-  
 ջանաց սկիզբն պէտք է լինի, թէ որ  
 քո մեղքերդ Քրիստոսոյն չըթող-  
 վին քեզ:

Այլ թէ մտիկ տամ Քրիստոսին ինչ-  
 պէս մին մէնակ փրկչին, և հենց իմ

առնիցս յուսահատ էլած փափհիմ  
 նորա մօտ փրկվելոյ համար. ապա  
 աստուած ինձ վերայ էլ չի բարկա-  
 նալ. և իմ մեղքերն որ շատ էին  
 թողված կը լինին. և իմ առնս ըն-  
 դունելի կը լինի նորան. և թէ որ  
 պատահի ինձ որ հենց էս գիշերուս  
 մեռնեմ, հաստատ յուսով աստուծոյ  
 մօտ կը դնամ, Ո՛հ քանի՜ երանելի է  
 էս վիճակս՝ որ սրանում իսկի վախե-  
 նալոյ պատճառ. չըկայ ո՛չ կեանքիս  
 մէջն և ո՛չ մահի մէջն: Ինչու որ՝  
 նորանում աստուած մեզ բարեկամ  
 ունիսք, յիսուսըն փրկիչ, սուրբ հո-  
 գին մեզ մխիթարիչ, մահն մեզ բարե-  
 կամ, երկնիսքն մեզ տուն, և յաւի-  
 տեն սկան աշխարհքքն խաղաղութե-  
 նով և ուրախութեամբ լցված և մեր  
 առաջին դրած: Այլ մեզու որ մարդ  
 ասն մի թէ էս է քո հոգոյ վիճակն:



ՏՆՄՆՈՒ ՄԻՆ ԲԱՐՕՕ:

Ձեզ հաւատացեալն երիզ հա-  
 մար պատուական քար է. (Թ.  
 Պեռ. Բ. 7:)

Մաքեալն էս տեղ ողորմելի կորած մեղաւորների սիրելի բարեկամ Յիսուսի քրիստոսի համար է խօսում։  
 Կա որ մեզ վերայ ողորմած էլաւ՝  
 երբ որ մենք ինքս մեղքերին ծածաւայելով մեր անձներին վերայ  
 անողորմ էլանք. որ էլ մեր տեղակ  
 մեռաւ՝ երբ որ արդար օրէնքի իրաւունքին պէս արժանի էինք դժոխքի մէջ քցվելոյ։

Մյա հիմիկ թէ որ հաւատաք  
 թէ ձեր մեղքերն կըղատապարտէին  
 ձեզ, թէ որ քս նորանց իրան անձնայն  
 վեր չէր աւել. և թէ պէտք էր ձեզ  
 մինչև յաւիտեան անիծված լինիլ  
 թէ որ քրիստոս ձեզ համար անէծք  
 չէր էլել. և թէ որ խոնարհուլթե-  
 անով հաստատ գիտենանք ձեր սրտե-  
 րումն՝ որ նորա արիւննայն թողու-  
 թիւն էք ստայել. և թէ որ կարող  
 էք մտիկ տալ նորան ինչպէս թէ  
 հե՛նց ձեզ վերայ կաւէր էն՝ որ ա-  
 լետարանումն էն աղքատ մեղաւոր  
 կնկանն ասայ. (Պ աւ. է. 48. 50.)  
 Թէ զնա խաղաղուլթեանով, քո մեղ-



քերդ թողլած էն քեզ, ասումեմ.  
 եթէ էս ամէնս լինի ձեր սրտումդ՝  
 ապա Քրիստոս պատուական է ձեզ  
 համար, և սիրումէք նորան աւելի  
 քան թէ ամէնքն: Սիրումէք նորա  
 համար մտածել նորանից լսել նո-  
 րանից խօսիլ, և ինչ որ մինանգամ  
 նա պատուիրել է՝ ցանկանումէք էն  
 անել, և ինչ որ մին անգամ արգե-  
 լեց՝ էն անելուցն խսպառ և ամէն  
 աշխարհքըն էլ ստանալ: Ապա դուք  
 հիմիկ նոր ստեղծված էլաք, և կարող  
 չէք էնպէս ապրիլ և վարիլ ինչ-  
 պէս որ մին ժամանակով ապրումէիք.  
 պատճառն որ նոր ծնվաք, շինն անց-  
 կացաւ, և հիմիկ ամէնն նոր էլաւ  
 (Թ. Արդ. Ե. 17.) Ինչ բան որ մին  
 ժամանակ ատումէիք, ինչպէս որ ա-  
 ղոթքըն, օրհնաբանութիւնքըն, քարոզ  
 լիւն, և աստուծոյ խօսքը կարդալըն,  
 հէնց էն հիմիկ սիրումէք, և ինչ որ  
 մին ժամանակ սիրումէիք, ինչպէս  
 ունայն խօսակցութիւններըն և ոչ-  
 ինչ փուչ ուրախութիւններըն, և ըզ-  
 քաղմունքներըն, հէնց էն հիմիկ ա-

տու մէք՝ և յետ էք դառնում նո-  
 րանից, շիմիկ կարող չէք քուն  
 մտնել գիշերումն եթէ առաջ չը-  
 գոհանաք ձեր ողորմած փրկչիցն էն  
 ամէն պարգևներին համար՝ որ յե-  
 րեկումն տուաւ ձեզ և էլ եթէ ա-  
 ռաջ չը յանձնէք ձեր անձները  
 նորա պահպանութեանն գիշերի պա-  
 ասհմունքների երեսիցն, և նորա  
 ձեռքն տաք ձեր հողիները որ՝ եթէ  
 հենց էս գիշերումն մեռնիք, հա ի-  
 րան մօտ ընդունի ձեզ իրան արքայ-  
 ութեան մէջ: Ա՛յ՛ էրբ որ աւաւո-  
 տանց վեր կե՛նաք՝ կարող չէք դուրս  
 գալ աշխարհքի մէջ ձեր օրինաւոր  
 դոքթերըն կատարելոյ համար, ե-  
 թէ առաջ աղօթքով չաղաչէք նո-  
 րան՝ որ պահէ ձեզ աշխարհքի թա-  
 լակներիցն, և սատանայի փորձանք-  
 ներիցն: Աստճառն որ՝ ձեր ցանկու-  
 թիւնն և փառակն մէնակ էն է՝ որ  
 հաճոյ լինիք ձեր սիրելի փրկչին:  
 Ա՛յ՛ նրա համար ամէն բաներիցն ա-  
 լելի նորան տրամայնելուն վախե-  
 ճումէք: Նրա համար թէ ուտէք:

և թէ խմէք, ցանկանումէք ամէնքն,  
աստուծոյ փառաց համար անել: (Ս.  
Կորն. Ժ. 31:)



### ՏՆՍՆԵՐԿՈՒՄԻ ԲԵՏՈՑ:

Զեռեցէք սրբու թեանն, որ  
առանց հորան ոչ ոմ տէրին չի  
տեսնիլ: (ՍԷՐ. ԺԲ. 14:)

Նստուած սուրբ Նստուած է: Քը-  
րիստոս սուրբ փրկիչ է. աստուծոյ  
հոգին սուրբ հոգի է, երկնքի ար-  
քայու թիւնն սուրբ տեղ է. հրեշ-  
տակներն սուրբ հրեշտակներ են. և  
աստուծոյ ամէն փրկված ժողովուր-  
դն սուրբ ժողովուրդ են: Աւրեմս  
մի թէ ես էլ սուրբ եմ. թէ որ չեմ  
ահա՛ սուրբ գիրքն վկայումէ ինձ. որ  
աստուծոյն չեմ տեսնիլ և հեցս էլ  
չեմ կարող տեսնիլ: Մայց ես սրբ-  
բու թիւնս ոչ թէ մէնակ կեանքի  
գրսի բարեգործութիւն և բարեձե-  
ւութիւն է. ինչու որ՝ գրսի բարե-  
ձեւութիւնն էն տեղ էլ կարող է լի-  
ակն՝ որտեղ որ ճշմարիտ սրբութիւն

ջրկայ. Թէ և սրբութիւնն ինքն կա-  
 րող չէ աւանց բարեգործութեան  
 լինիլ: Թէ որ սուրբ ես ոչ մէնակ  
 մեղքիցն ես յետ քաշվում, բայց էլ  
 ճշմարտապէս նորան ատումես քո սրբ-  
 տումդ: Ամէն մեղքերըն էլ ատումես  
 ինչու որ էն ամէնըն որ աստուծոյ  
 կամքին հակառակ է, ատումես և  
 զղվումես. մինչև որ էլ քո էն զըզ-  
 վ ինն ինքն քո անձին վերայ է դառ-  
 նում. նրա համար որ դեռ միշտ մե-  
 ղաւոր ցանկուլթիւն է մնում քեզա-  
 նում: Պատճառն որ եթէ քո մեղ-  
 քերըն քննումես ոչ մէնակ քո կէ՛ցա-  
 դավարութեանումն կըզտնես, բայց էլ  
 քո սրտումդ. ինչու որ եթէ սուրբ  
 մարդ ես, ապա քո խղճմտանքդ ցա-  
 ւումէ՝ ոչ մէնակ գործքերի և խօս-  
 քերի համար, բայց էլ քո մտած-  
 մունքների և ծածուկ ցանկուլթիւն-  
 ների համար, որ մեղաւոր ե՛ն: Աւ-  
 րեմն ցանկանումես որ ոչ մէնակ աշ-  
 խարհքի աչքումն բարեձև երևես,  
 բայց որ աստուծոյն հաճոյ լինիս՝ որ  
 քո միտքդ և սիրտդ աստուծոյ կամ-

քին և հաճոյութեան հաւասար լինի  
 Երաճի հասէս է: Միտքդ բեր՝ որ  
 գրված է (թէ) առանց սրբութեան  
 ոչ ով կարող չէ տէրին տեսնել: Ար  
 քիչ խօսքով ասեմ. սրբութիւնն աս-  
 տուծոյ սէրն է որ մեր սրտերի մէջ  
 փռված է էն սուրբ հոգոյ ձեռովն՝  
 որ տրվւած մեզ:

Հենց էս սէրս շարժուի մեզ որ  
 ամէն բանի մէջ սուրբ հնազանդու-  
 թիւն ցոյց տանք և աստուծոյ խօսքն  
 էն կանոնն է լինում որ նորան պէս  
 մեր կեանքի բոլոր ճանապարհները  
 շիտակենք է կառավարենք. և աս-  
 տուծոյ փառքն մեր առաջին դրած  
 է ինչպէս որ մեր ամէն կենցաղա-  
 վարութեան և գործքերի պատճառն  
 և վերջն: Մայց հիմիկ ոչ ով կարող  
 չէ երկնքի արքայութիւնն մտնել  
 մինչև որ սրբված լինի: Հաճատու-  
 մե՞ս դու սրան. և քո սրտումդ ա-  
 ղօթք էս անում, թէ Տէր ամենեին  
 սրբի՛ր ինձ, հոգոյ, մտքի, և մարմնոյ  
 կողմանէ: Այժմէ հասէս է, ասլա Տէ-  
 րըն սկսել է իրան բարի գործն քո

սրտուամբ, և էն էլ կրկատարէ մին  
չև Յիսուսի Քրիստոսի օրն, որ  
դու սո՛րբ և անարատ կանգնիս նո-  
րա առ աջին սիրով:



### ՏԵՄՆԵԻ ԵՐԱՄԻ ԲԱՄՈՉ:

Մտիկ տանք էն երանելի  
յուսոյն՝ և մեծ աստուծոյ և մեր  
փրկիչ Յիսուսի Քրիստոսի փա-  
ռաւոր յայտնութեանն (Տեպտո  
Բ. 13.)

Քրիստոսին հաւատացած մարդոյ  
երանելի և առանձնական շնորհքն  
էս է, որ իրան տէրի մին էլ դաւոյն  
և յայտնութեանն մտիկ տայ: Յիսուս  
խոստացաւ՝ թէ ինքն մինէլ կըզայ, և  
թէ շուտով կըզայ: (Յայտ. Եբ. 20.)  
Նա յայտնեց թէ իրան դալն յանկար-  
ձակի պիտի լինի ինչպէս գեշերվան  
գողի դալն: (մ. Թեո. Ե. 2.) Այս  
ճշմարիտ հաւատացեալն է էնպէսի  
մարդ՝ որ յուսով խնդրուէ նորան  
սպասուէ նորան, և պատրաստ է ու-  
րախութեանով ընդունել նորան: Պատ-

Ճառն որ՝ նա հաստատ գիտումէ՝ որ  
 տէր Յիսուսն կը յայտնվի երկնքիցն  
 իրան զօրութեան հրեշտակներովն  
 կրակի բոցով վրէժ առնելոյ նոր-  
 րանցից որ աստուծոյն ջե՛ն ճանաչում,  
 և մեր տէր Յիսուսի Քրիստոսի ա-  
 ւետարանին ջե՛ն հնազանդվում, որ  
 նորանք պատիժ կը քաշեն յաւիտե-  
 նական կորուստըն Տէրի երեսիցն՝ և  
 նորա փառաւոր զօրութենիցն: Իսպ  
 նրա վերայ էն էլ գիտումէ թէ նոր-  
 րա մին էլ գալոյ պատճառն էն է,  
 որ փառաւոր լինի իրան սրբերումն  
 և զարմանալի իրան հաւատացեալ-  
 ներումն: (Բ. Թ. Գ. Գ. 7. 8.) Նրա  
 համար էլ նա մտիկ է տալիս էն  
 երանելի յուսոյն: Պատճառն որ Յի-  
 սուսի Քրիստոսի ձեռովն խաղաղու-  
 թիւն ունի աստուծոյ հետ. որովհե-  
 տե էն մեղքն և յանցաւորութիւնն  
 որ ամէն վախիտ պատճառ է, հեռու  
 վեր կալվաւ նրանից: Նա հաւատումէ՝  
 թէ դատաւորն իրան բարեկամ է, և  
 նրա համար շատ ուրախ յուսով մտիկ  
 է տալիս նորան: Նա իմանումէ թէ

Իրան հիմնիվան վ իճակն իրան յա-  
 տուկ հանգիստ չէ. պատճառն որ՝  
 Թէ և մեղաց դատասարտութիւնն  
 նորա խղճմտանքիցն՝ և մեղաց սէրն  
 և զօրութիւնն նորա սրտիցն՝ վէր է  
 կալվել. բայց էնպէս էլ նա տրտմու-  
 Թե՛նով է իմանում. Թէ դեռ մեղք  
 կայ բնակված իրանում և հրա հա-  
 մար շատ ցանկանումէ Քրիստոսի  
 գալոյն՝ որ էն իսպառ քանդէ և վէր  
 առնէ: Ան յոյսն որ նա ունի՝ երա-  
 նելի յոյս է. պատճառն որ էն բա-  
 ներն որ նորանց յուսով մտիկ է աա-  
 լիս. ամէնից պատուելի էն, և միշտ  
 կենալով և մնալով յաւիտեհական և  
 հաստատեն էն մարդոյ համար, որ  
 հաւատքով և յուսով սպասումէ հո-  
 րանց: Մե՛նք որ էս մարմնոյ և ա-  
 ըիւնի ծածքի տակն ենք. (ք. Աղբն.  
 Է. 4.) մեղքով, չեղութե՛նով, և  
 փորձութե՛նով ծահրացած զզվումենք  
 բայց մեր Տէր Յիսուսի Քրիստոսի  
 փառաւոր յայտնութեան ժամանակն  
 աստուծո՛ծ ամէն արտասուենքն կըսրբէ  
 մեր աչքէ ընցն, և էլ մահ չի լի-



նիլն ո՛չ սուղ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցաւ,  
 ո՛չ աշխատանք էլ չի լինիլ. ինչու  
 որ՝ աւաջինն անցկացաւ:



## ՏԵՄՆ ԻՆ ԶԱՐԴԱՊՊՎ ԿԸ- ՄԱՕ:

Թի՛ է որ դուք որ չար էք՝ դի-  
 տումէք բարի պարզեաներ տալ  
 ձեր որդոցն, էլ որքան աւելի  
 ձեր եկնաւոր հայրն բարի բա-  
 ներ սուրբ հոգին կըրտայ նորանց  
 որ խնդրուեն նորան: (Ղուկ.  
 Ե. 4.)

Եւ խօսքերովս մեր մարդասէր  
 հայրն՝ որ երկնքումն է թոյլ է տա-  
 լիս մեզ, որ մին շատ հարկաւոր բան  
 հեց մեր խղճմտանքովս իմանանք և  
 հաստատենք:

Եւ մեր միտքս է բերում էն շարժ-  
 մունքներն և քաղցր սէրն որ իբր  
 ծնողք որդոյ վերայ ունինք, որ մեր  
 յոյսն հաստատէ, և զարթնացնէ. և  
 սրա համար ասումէ. ձեզանից ով է

Էն հայրն որ նորանից իրան որդին  
 հաց խնդրէ, մի թէ քան կըտայ նո-  
 րան: Այլ թէ մի սոված երախայ ի-  
 րան հօր մօտ գայ՝ և ասէ նորան.  
 Ի՞նչ հայր սովամահ կորչումեմ, հաց  
 տուր ինձ որ ուտեմ. ասա հայրն  
 թէ որ գաղանից աւելի չար չըլինի  
 մի թէ քար կըտայ իրան որդոյն՝ մի  
 թէ կըծիծաղէ նորանով: Այլ թէ որ  
 ձուկըն խնդրէ՝ մի թէ օ՞ճ կըտայ  
 նորան. կամ թէ որ ձու խնդրէ՝ մի  
 թէ կնիծ կըտայ նորան, որ սպանէ  
 նորան: Իրաւի որ չէ: Աւրեմս իր-  
 քան աւելի էլ ձեր երկնաւոր հայ-  
 րըն, որ նորա սերն աշխարհ մեծ է  
 իրան սգորմելի մեղաւոր որդոյ վե-  
 րայ քան թէ ձերն, ձեր մարմնոյ ծը-  
 նուկի վերայ՝ բարի բաներ ցուրբ  
 հոգին նորանց կըտայ, որ խնդրումեն  
 նորան: Այս սգորմելի և անխելք  
 մեղաւոր եմ: Այս կարօտութիւնն ու-  
 ճիմ իմ ահ ձրս ձանաչելոյ՝ որ աս-  
 տուծոյ աւաջին մեղաւոր եմ, և նո-  
 րա արդար բարկութեան ներքեւ  
 վեր ընկած: Այս կարօտ եմ որ Յի-

սուս Քրիստոսին ճանաչեմ որ նա  
 իմ փրկիչ է. պատճառն որ նորան  
 ճանաչելն յաւիտեհական կեանք է:  
 Մայց էս փրկութիւն տուող գիտու-  
 թիւնըս մէնակ երկնաւոր և աստ-  
 ուծածային ուսմունքիցն կարող եմ ըս-  
 տանալ: Ա՛յ խոստացաւ ատլ իրան  
 սուրբ հոգին, որ աղքատ և անխելք  
 մեղաւորին, որ իրան անխելքութիւ-  
 նըն իմանումէ առաջնորդէ էն ամէն  
 ճշմարտութեան մէջ որ հարկաւոր է  
 նորան մսիթարեւոյ և փրկեւոյ հա-  
 մար: Ա՛յ տէր թող քո սուրբ հոգիդ  
 սովորցնէ ինձ:

Էս ոչորմեւ ի և անօգնական մե-  
 դաւոր եմ, և օրէցօր ճանաչումեմ  
 թէ կարողութիւն չունիմ որ աս-  
 տուծոյ որդոյն հաւատամ: Մայց էն  
 հաւատքն որ Քրիստոսին ընդունումէ  
 ամէնիցն աւելի հարկաւոր է փրկեւոյ  
 համար: Ի՛նչ խղճմտանքս՝ խռովված  
 է իմ մեղքերի պատճառովն. ցանկա-  
 նումեմ և կարօտ եմ որ ճանաչեմ  
 նորան, և նորա յարութեան զօրու-  
 թիւնըն: Մայց էնքան անկարելի է

ինձ իմ անձիս զօրութեան ջանքովն  
 հաւատար զբքան որ անկարելի է  
 ինձ մին աշխարհք ստեղծել: Մայց  
 աստուծո՞ւմ խոստացել է տալ իրան  
 սուրբ հոգին որ հաւատքն ստեղծ է  
 և գործ է ամէն մէկ մեղաւորի սըր-  
 տումն, որ խոնարհութենով աղաչու-  
 մէ իրան: Ա՛յ տէր օգնութիւն արա՛  
 ինձ, էնպէս հաճատար որ իմ խըղձ-  
 մտանքի խաղաղութիւնն, իմ հոգոյ  
 փրկութիւնն, և քո անուան յաճիտե-  
 նական փառքն հաստատվի:

Աստուծո՞ւմ իրան սուրբ հոգին նո-  
 րանց է տալիս՝ որ խնդրու՞մեն նո-  
 րան: Ա՛նք առանց նորա օգնակա-  
 նութեան ոչ ինչ ջէնք կարող անել  
 բայց մէնակ մեղանջել որ հէնց նո-  
 րանով մեր անձնէրըս ասկանու՞մենք  
 և կորցնու՞մենք: Ա՛ի թէ իմանու՞մես  
 դու թէ կարօտ ես էն օգնականու-  
 թեանն: Ա՛յ մի թէ էն կարօտու-  
 թիւնն և անչախ խեղ ջութիւնն տա-  
 նու՞մես, քեզ շնորհաց աթոռին մօտ,  
 որ աստուծոյ ամէնից հարուստ շը-  
 նորհքն ստանաս: Ա՛ի թէ դու էլ

Էնպէս խնդրու՞մես՝ ինչպէս մին սո-  
 ված եարխայ իրան հօրիցն հաց է  
 խնդրում: Իրա՞ն է որ միտքդ ա-  
 ուիր քո անխե լքութիւնդ՝ էնպէս որ  
 բոլոր սրտով սուրբ հոգոյ աստու՛ճա-  
 ծային ու՛սմունքն խնդրես. և ճանա-  
 չեցի՞ր քո անօգնական վիճակդ՝  
 էնպէս որ աստու՛ճանից օգնականու-  
 թիւն խնդրես:

Խնդրեցէ՛ք՝ և կըտրվի ձեզ՝  
 ման եկէ՛ք և կըզանէ՛ք, դունն է՛ ա-  
 կեցէ՛ք՝ և կը բացվի ձեզ: Միտքդ  
 բեր՝ որ աստու՛ճ կարօղ չէ իրան  
 խօսքն քանդել: Եթէ խնդրեցիր՝ և  
 չաւիր, իմացիր որ ջերմեռանդու-  
 թե՛սով չը խնդրեցիր: Դու քո պա-  
 կասութիւնդ չես իմանու՛մ: Եւ պա-  
 խնդրիր աստու՛ճանից որ տայ քեզ  
 քո պակասութիւնդ ճանաչել, և ա-  
 պա նա կը լցնէ նորանց. աղաչիր նո-  
 րան որ սովորոյնէ քեզ աշօ՛թք անել.  
 Եկ նորա մօտ ինչպէս աղքատ, ան-  
 խե լք, ան միտ, և թուլացած մանուկ  
 պատճառն որ՝ եթէ չըդաւնար, և  
 չը լինի՛ք երախտանելի նման, կարօղ

չէք երկնքի արքայութիւնն մտնել  
 (Մատթ. ԺԵ. 3:) Ապա ուրեմն ո՛վ  
 Տէր շնորհիւր մեզ էս հոգիս, որ ե-  
 րախաւսերի նման լինինք:



## ՏՆՄՆ ԵՒ ՀԻՆԳԻՆՐՈՒՊ ԲՆՐԱՉ:

Մարդկանց համար սահման-  
 ված է մին անգամ մեռնիլ. և նո-  
 րանից ետև դատաստանն: (Աբր.  
 Ժ. 27:)

Ես և դու մահկանացու՛ ստեղծ-  
 վածներ եք: Մենք տեսինք որ մեր  
 բարեկամներիցն և ազգականներից  
 շատերն գերեզմանի մէջ դրվան. շա-  
 տերն որ մեզ նման առողջ էին, և  
 յոյս ունէին, որ էլ շատ ժամանակ  
 մեզ հետ ապրին էս երևելի աշ-  
 խարհքումս. մենք տեսինք որ մին  
 քանիսն շատ օրվան հիւանդութենով  
 և տկարութենով մաշ վեցան և կեան-  
 քիցս վեր կալվան, և մին քանիսն յան-  
 կարծակի էս կեանքիցս կտրվեցան՝  
 առանց իմանալոյ իրանց մեռնելոյ

սահաթըն Մէհակ աստուծո՞ւ է գի-  
 տում, թէ մե՞նք երբ պիտի հորանց  
 ետեւէն գնանք դէպի յաճիտե՛նական  
 աշխարհքն: Մե՞նք մեր վերջին օրն  
 իսկի չե՛նք գիտում, պատճառն որ՝  
 մեր ժամանակհերն աստուծոյ ձեռքն  
 են, և կարելի է որ հենց էս գիշե-  
 րումս մեր մեռնելոյ սահաթն գայ:  
 Տայց հաստատ են ե՛նք գիտում, թէ  
 պէտք է որ մեռնելոյ սահաթն գայ.  
 և են էլ հաստատ գիտումե՛նք թէ  
 նա շատ հեռո՞ւ չէ մեզանից. միայն  
 թէ որքան մօտիկ լինի՞ են չե՛նք  
 գիտում: Տայց հիմիկ եթէ էս ամէնն  
 ճշմարիտ է. ապա ի՞նչ անմտու-  
 թիւն և յիմարութիւն է. ճշմարիտ  
 ապաշխարութեան հարկա՛նք գործն  
 հեռո՞ւ քցել և օրէցօր հորա ուշա-  
 ցիւել: Հաստատ չե՛նք գիտում. եթէ  
 աւա՛ւօտըն ենք տեսնելու: Արե՛մս  
 որովհետեւ ապաշխարութիւնն աս-  
 տուծոյ պարգև է, ապա մե՛նք եթէ  
 ծուլանք են էս օրումս խնդրել և  
 հորա զգուշացնող ձայնն չըլտե՛նք  
 իրաւի որ նա կասէ մեզ ինչպէս որ

առակներու մն ասել է. Թ. Թ. 24. և Թ.)  
 Թէ որովհետեւ ես կանչուածի և չե-  
 իք լամ. իմ խօսքերը երկարացը-  
 նուածի. և ակարջ չեիք դնում. բայց  
 իմ խորհուրդները անարդուածիք. և  
 իմ խրատներն ակարջ չեիք դնում:  
 Այա սրանից ետեւ ես կը ծիծաղեմ  
 ձեր կորստանք և ուրախ կը լինիմ  
 երբ որ նեղութիւն և սրաշարժելն  
 կը գայ ձեզ վերայ: Այն երբ որ յան-  
 կարծակի խառնութիւն կը հասնէ ձեզ  
 և կործանւի ինչ մը ընկ (Գործարկի Կարգ)  
 համարութեամբ կը գայ. կամ երբ սա-  
 տակի ինչ կը հասնէ ձեզ վերայ. կը լի-  
 նի որ ինչ կանչէք. և ես չեմ լսիլ  
 ձեզ. չարերն կը խօսուրեն ինչ և չեն  
 գտնիլ: Ահա զոր իմաստութիւնը  
 ասեցին և Տէրի վախը չը խօսու-  
 րեցին:

Առնելուցն ետեւ տատաստանն է  
 գալիս:

Անք ամէնքս պէտք է Բրիտանո-  
 սի դատաստանի աթուի առաջին  
 կանգնինք որ ամէն բանի համար  
 պատասխան տանք, որ մարմնոյ մէջ



գործեցինք, թէ բարի լինի և թէ  
 չար: Ապա ով է որ պէտք է էստեղ  
 կանգնի. ամէն մէկն, թէ փոքրն թէ  
 մեծն, թէ մեծատունն թէ աղքա-  
 տըն, ինչո՞ւ որ իսկի ջոկուեթիւն կամ  
 զանազանուեթիւն չըկայ: Ապա դու  
 և ես պէտք է երևինք էստեղ: Եւ այց  
 ի՞նչո՞ւ համար շէնց նրա համար  
 որ ամէնակարող դատաւորի առաջին  
 մեր ամէն ծածուկ խորհուրդներն  
 համար և մեր ամէն ծածուկ գործ-  
 քերն համար պատասխան տանք: Այս  
 մին յիշատակի գիրք է պահում. որ  
 նորանում ամէն չար խորհուրդներն,  
 խօսքերն, և գործքերն գրված են,  
 որ նորանցից ամէն մէկն առաջ կը-  
 բերվի մեզ յաւիտեան ամաչացը-  
 նելոյ համար. եթէ աէր Յիսուսի  
 Քրիստոսի պատուական արիւնոյն էն  
 ամէնիցն սրբված չըլինիք: Արդու-  
 մենք տճաշունչ գրքումն. (Յայտն.  
 շ. 16.) թէ մին քանիսն էն. օրումն  
 կըկանչեն դէպի սարերն և դարե-  
 ըն կասեն թէ մեզ վերայ ընկէք,  
 և ծածկեցէք մեզ աթուի վերայ

նստողի երեսիցն, և գառի բարկութե-  
 հիցն: Մայց տէրն տայ որ քեզ և ինձ չը-  
 պատահի հասկսի կորուստ և խեղճութի  
 լա ահաւոր վիճակիցս պրծնելոյ  
 համար, թող Տէրին խնդրենք դեռ  
 քանի որ նա մօտիկ է: Թող ամբա-  
 ընշան իրան ճանապարհըն թողէ, և  
 անօրէն մարդն իրան խորհուրդներն,  
 և դառնայ տէրին մօտ՝ և ողորմու-  
 թիւն կըգտնէ. և մեր աստուծոյ  
 մօտ՝ որ շատ առատութենով հորա  
 անօրէնութիւններն կըթողէ: Ահա  
 էս է շարհայ և փրկութեան օրն:  
 Մայց երբ որ դատաստանի օրն կը-  
 գայ. ապա անկարելի կըլինի որ ո-  
 ղորմութիւն խնդրես և գտնես: Աթէ  
 մեռնիս առանց Քրիստոսի հետ մաս-  
 նակցութիւն ստանալոյ: Ապա լու-  
 էր քեզ որ իսկի ծնւած չըլինէիր  
 Պատճառն որ՝ լա՛ւ է իսկի աշխար-  
 քի մէջ չըծնուի՛ր քան թէ միշտ և  
 միշտ և յաւիտեան տանջանք քաշել և  
 ողորմելի լինել դժօխքի մէջն: Մայց  
 հաստատ է որ հենց ամէն մեղաւոր-  
 ների բաժինն էս պիտի լինի՝ որ ի-

րանց մեղաց համար թողու թիւն չը-  
խնդրեցին, և չըզջացան իրանց տէր  
աստուծոյ մօտ դառնալոյ համար:  
Պատճառն որ հենց աստուծո՛ւ ասաց  
էն՝ հա որ կարող չէ սուտ ասել:

ՏԵՍՆ ԵՒ ԱՆՅԵՐՈՒՄ  
ՔԱՆՈՅ:

Մենք ինչպէս կը պրծնինք թէ  
որ անհոգ լինինք էնպէս ի մեծ  
փրկու թեան համար: (Աբր. ք. 3)

Իրա՛նի որ մեծ է էս փրկու թիւնս  
և ամէն մտքից էլ մեծ. ինչու որ  
էնպէս ի փրկու թիւն է՝ որ հենց աս-  
տուծոյ իմաստու թեւոյն և սիրոյն  
հաստատւած է իմ ողորմե լի և կո-  
րած հոգոյս համար. և էնպէս ի փր-  
կու թի որ հենց ա՛յ միածին որդոյ  
մահոյն պատրաստւած է: Ա՛յլ թէ  
քանի մօտիկ էի ես դժոխքի ասիւն  
(դժաղ էն) ո՛րքան խոր ընկած էի, քա-  
նի՞ շատ և մեծ էին իմ մեղքերն,  
որ էսպէս ի մեծ փրկու թիւն հարկա-  
ւոր էր ինձ համար: Աւրեմն քանի՞

անհաւոր քան է հորա համար անհոգ  
 լինիլն: Պատճառն որ՝ աստուծած էլ  
 ուրիշ որդի չունի որ աշխարհքի  
 համար տայ: Եւս էթէ ծուլանաս,  
 և անհոգ լինիս էս փրկութեանս հա-  
 մար. էթէ ջանք չանես որ ճշմար-  
 տապէս ստանաս նորան, էթէ միտք  
 չանես քո մեծ կորուստի համար, և  
 փրկութեան համար որ քո աւաջիդ  
 կայ, էլ ասան. ի՞նչպէս կարելի է  
 քեզ որ ապրես. անկարելի է: Պատ-  
 ճառն որ՝ դու էն միս մէնակ փըր-  
 կիչն անարդումես. որ նորանով ա-  
 մէնից մեծ մեղք ես գործում. աս-  
 տուծոյ ողորմութիւնքն որ Քրիստո-  
 սումն է դէն ես քցում, և Քրիստո-  
 սի պատուական արիւնքն ոտի տակ  
 ես կոխ տալիս: Աւրեմն չե՞ս վախե-  
 նում և դողդողում էգպիսի մտած-  
 մունքների համար: Հենց հաստատ  
 հաւատան՝ թէ ամէն մեղաւոր մարդ  
 որ ծուլացած և անհոգ է և աղօթքի  
 համար ջերմեռանդ չէ, աստուծոյ  
 ողորմութեան և Քրիստոսի փրկուե-  
 դեմ անհնարին խիստ մեղանջումէ:

բայց խնդիր ազատութիւն և միտքա-  
 րութիւն չըկայ նորանց համար, որ  
 Քրիստոսին անարդուներն. պատճառն  
 որ՝ սրանցից ետև մեղքերի համար  
 էլ աւելի պատարագ չըկայ. նորանց  
 կորուստն հաստատ է և մտիկ է՝ և  
 յաւիտենական և անտանելի կըլլի-  
 նի: Այս միտքդ բեր թէ ահա էս է  
 ընդունելի ժամանակ. ահա էս է  
 փրկութեան օրն: (Բ. Արմ. 7. 2.)  
 Աթէ առանց Քրիստոսի մեռնիս,  
 անկարելի է քեզ որ աստուծոյ ե-  
 րեսըն համարձակութեամբ և միտ-  
 քարութեամբ տեսնես: Բայց հաս-  
 տատ մնում է քեզ համար, որ ընտ  
 գատաւորի բերանիցն էն ահաւոր  
 վճիռն որ ասաց. թէ հեռու գնացեք  
 անիծվածներդ՝ յաւիտենական կրակն  
 որ սատանային և նորա հրեշտակնե-  
 րին համար պատրաստված է: (Ապոկ.  
 16. 41.) Բնաւ լիցի՝ Աստուծո՛ւ չի  
 անէ: Նրա համար մին էլ աղաչու-  
 մեմ քեզ ո՛վ իմ մեղաւոր ընկերս՝  
 էս գիրքս վերջացնելուց և խփելուց  
 առաջ կանգնիր և միտք արա՛. և մա-

հաւանող ծուկնր դիրք և երեսի վերայ  
 ընկիր և դէպի աստուած աղօթք ա-  
 րան որ քո խղճմտանքըդ զարթնացնէ  
 և Քրիստոսի գիտութիւնըն քեզ շը-  
 նորհէ: Հենց իմ աղաչանքս և ա-  
 ղօթքս էլ վերահուժեն դէպի աստ-  
 ուած որ քո փրկութիւնդ հաստատ-  
 վի: Այլ իմ առաջ իս մին ուրիշ պատ-  
 ճառ չըկայ էս գիրքս քո ձեռքդ տա-  
 լոյ համար, բայց մէնակ քո հոգոյ յա-  
 ճիտեհական փրկութիւնն: Այլ իմ  
 աստուած տո՛ւր՝ որ էս փոքր գիրքս  
 շատ պտուղ բերէ կարդացողների  
 հոգոյն համար. թէ հէմիկ և թէ  
 յաւիտեան. շնորհիր քո օրհնութե-  
 նովդ, որ սորանում գրած պատուա-  
 կան ճշմարտութիւններն անուշ հոտ  
 վրեն կեանքից դէպի կեանք, և ոչ  
 թէ մահից դէպի մահ: Աղաչումմ  
 քեզ ո՛վ Տէր շնորհիր էս Յիսուսի  
 Քրիստոսի համար. Ամէն. Լինի:



Շուշի բերդումն անտարանական  
Ժողովքի տան մէջն էս հետեօղ  
գրեանքս էլ ծախվումն:

1. Նոր հրահարանն արեւալ 'ի Վեհեօրէի:
2. Նախօրեւեանն շէրահանեւեանն:
3. Նախօր Բաղիւրտ. 'ի Գրաբաւե  
ցաշ Խարհաբաւ:
4. Բնութեացաւորտ 'ի հին հրահարանէ:
5. Նախաւեանն աստուածացին Վհացաւ  
բեանց. Գրաբաւ և աշխարհաբաւ:
6. Պատճառեանն սարբ Գրաց Գրաբաւ:
7. Տեարահ այբաբեանեանն:
8. Ընթացին հանանն սարճաւի:
9. Արեւ Խօսուցաւիտ զնո խաւանացի զնո  
աշխարհանեանն Տարբաց հեօն. աշխար  
հաբաւ:
10. Ընթարանի զօրաւի հաճ զնո արաբ  
ճաւացի սարճաւի: աշխարհաբաւ:
11. Նախօր շնեւեանն շրիստանեանն  
հաւարաց և Տակեօրանեանն հրօնի. աշ-  
խարհաբաւ:
12. Շաք հարհաւար հարցճաւիտիւր. աշ-  
խարհաբաւ:

2 v

13. Երևանի քաղաքի քաղաքապետարան

14. Երևանի քաղաքի քաղաքապետարանի  
համար 13/14 քաղաքապետարան

